ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունվարի 2026թ. թիվ 73-Ա

Մ.ԷՏԻԲԱՐՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2025 թվականի ապրիլի 30-ի թիվ 210-Ա որոշման 1-ին կետը և ՀՀ Լոռու մարզպետի 2026 թվականի հունվարի 26-ի թիվ 69-Ա որոշումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Մարիամ Սարգսի Էտիբարյանին 2026 թվականի հունվարի 29-ից ազատել «Դսեղի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնից և լուծել նրա հետ 2025 թվականի ապրիլի 30-ին կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

2. «Դսեղի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածով սահմանված կարգով Մարիամ Էտիբարյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ռ.Պողոսյանին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը ստորագրվելուց հետո եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ էլեկտրոնային փոստի և ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով կամ պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. հունվարի 26
ք.Վանաձոր